

ՀՆՁՍԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ Ե Յ Յ Է Զ Է Յ Թ Ո Ւ Ն

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐ.

Ներկայումս տեղի ունի մի նշանաւոր երեւոյթ, որ առհասարակ շատ սակաւ անգամ է տեսնուած: Եւ այդպիսի եղած երեւոյթներէն թերեւս ամենանշանաւորն այն է, որ կատարւում է այժմ աշխարհի աչքին: Մի փոքրիկ ազգի մի փոքրիկ մասը այսօր կանգնած է դէմ առ դէմ եւրոպական վեց մեծ պետութիւններին, որպէս և իր թշնամի սուլթանին: Եւս մի քանի շաբաթ կայ, ինչ այդ վեց պետութիւնները բանակցող միջնորդի գեր են կատարում — որոնք և որի հետ: Օչթութունում և Օչթութունի ապստամբների հետ: Եւ Օչթութունի ապստամբները ձեռք բերելով հաւատարմութեան (belligérant) իրաւունք, ինչպէս հաւատարմ հաւատարի առջև, բայց յաղթողը դէպի յաղթվածը, իրանց պայմաններն ընդունելով են քննութեան ու բանակցութեան համար, ընդունվում են վեց մեծ պետութիւնների կողմից, ներկայացվում սուլթանին և պատկերվում աջողութեամբ:

Եւս վերջինս, իր գոռողութեամբ հանդերձ, դա, որ հարկւր հաղարաւոր հայերի արիւնը խմեց մի քանի ամսուայ ընթացքում միայն, սուլթանն այսօր իր պոլսն է խոնարհեցնում հայ ապստամբների ձայնի առջև: Հայի վէները և ոյժը յաղթեց գազանին:

Յաղթված, ջարդված հայ ապստամբի հարուածներից, Օչթութունի վրայ յարձակվող իր զորքերի կէսը, 9,000 մարդ, մասամբ սղանված պատերազմներում, մասամբ մեռած քաղցից, մասամբ էլ ներկայումս անդոյս վիճակում վարակված անբուժելի հիւսնեղութիւններով — իր այդ ողորմելի ու կատարեալ պարտութեան վրայ թըշուառականն այսօր պաղատում է Եւրոպայից միջամտութիւն, որ ազատեն իրան Օչթութունի քաջերի կատաղութիւնից: Նշաններ ժամանակիս: Եւս թէ ուր է հասցնում ապստամբական գէների հարուածը և նրա հմուտ զործադրութիւնը: Եւ Օչթութունն այսօր այդ կարեւոր դիրքն է բռնել միջազգային քաղաքականութեան մէջ շնորհով իր ապստամբութեան, որ կազմակերպել ու վարում էր շարունակ Հնչակեան Առաքելութիւնը: Եւելի էլ ինչ փառաւոր ապացոյց կարելի է առաջ բերել յօգուտ յեղափոխական ու ապստ-

ամբական զաղափարի նպատակարարութեան և դրա զործադրութեան: Գլխից նաև էլ ինչ աւելի փառաւոր ապացոյց կարելի է առաջ բերել յօգուտ Հնչակեան Առաքելութեան փայլուն զործունէութեան: Եւրպիսով, յեղափոխական զաղափարը յաղթական կերպով ցոյց տվեց իր պատմական անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը հայութեան կեանքի ներկայ հանգամանքներում, որպէս և այդ զաղափարի զործական հողի վրայ դնող Հնչակեան յեղափոխական մարմնի պատմական մեծ դերը:

Բայց — խօսենք բացարձակապէս — այդ փառաւոր դիրքն այսօր միմիայն Օչթութունն է վայելում, փոխարէն ընդհանուր Հայաստանի: Եւս վերջին պարագայում հայկական խնդիրն իր ամբողջութեամբ բողբոլին տարբեր հողի վրայ կը լինէր և այլ կերպարանք կունենար, քան այսօր: Եւ թէ մեր ներքին թշնամիները և ամեն տեսակ հաւակորդները պակաս կուրացած լինէին իրանց կուսակցական ոխով ու նախանձով, անընդհատ խնարիւններ, հալածանքներ, քսու թշնամութիւն չը մղէին, արդիւքներ, սոսնձութիւններ չը ստեղծէին Հնչակեան Առաքելութեան և նրա զործունէութեան դէմ և եթէ նրանք գէթ մի քիչ անկեղծօրէն սիրէին իրանց ազգը, — արդեօք կարո՞ղ ենք տարակուսել, որ Օչթութունի ներկայ յաղթական ու վճռական դիրքը կունենային Հայաստանի ուրիշ վայրեր ևս:

Սակայն մի կողմ թողնենք այդ ներքին հաշիւները, որոնցից մարդու սիրան է փշաքաղվում ներկայ մի կողմից սոսկալի, իսկ միւս կողմից պանծալի բողբոլում: Եւս սարսափելի դասերը չեն կարող խելքի բերել նրանց, որոնց ղեկավարում են միայն կրքերը և ոչ թէ զաղափարը, ոչ թէ սրբութեան զգացումը: Գլխ համար նրանք չունեն ոչ բարոյական ոյժ, ոչ քաղաքացիական արիւթիւն և ոչ անկեղծութիւն: Եւ մենք այսօր իրաւունք ունենք նրանց վրայ նայելու զգուսնեով ու արհամարհանքով:

Ենցենք բանակցութիւնների խնդիրն:

Տեսնելով Օչթութունի Հնչակեան բանակների յաղթական արշաւանքներն ու դիմադրութիւնները

և իր զօրքերը կրելով ամենասոսկալի պարտութիւն ու ջարդ այդ պատերազմներում, սուլթանի կառավարութիւնը, խոտովանելով իր պարտութիւնը Օւսթունցիների առջև, դիմեց վեց պետութիւններին, նրանց միջամտութիւնը հայցելով: Այս վերջինների կողմից կարգադրվեցաւ, որ իրանց հիւպատոսները Հալեպում անցնեն Օւսթուն բանակցելու համար ապստամբների հետ, իրանք հանդիսանալով միջնորդ սուլթանի կառավարութեան և Օւսթունցիների մէջ: Հիւպատոսները գնալով Օւսթուն և բանակցելով ապստամբութեան պարագլուխների հետ, առաջարկեցին յանուն խաղաղութեան՝ վերջ դնել ապստամբութեան: Բանակցող ապստամբներն ուղեցին երկու օր ժամանակամիջոց իրանց պատասխանը ներկայացնելու համար: Այդ պատասխանը պարունակում է հետեւեալ պահանջներն ապստամբների կողմից, իբրեւ պայմաններ հաշտութեան.—

- 1) Ընդհանուր ամսիստիա (ներում):
- 2) Նշանակել քրիստոնեայ Նահանգապետ և քրիստոնեայ վարչութիւն:
- 3) Վերացում գոյութիւն ունեցող հարկային սիստէմի և նշանակել տարեկան յայտնի տուրք, որ Օւսթունը կը հատուցանէ սուլթանի կառավարութեան: Ազատել այդ տուրքի վերձարումից մի քանի գաղիք տարիների ընթացքում, Օւսթունը չունենալով դրա համար քաւահանաչափ միջոցներ: Մերժում վերակաշինել գինւորական տները:
- 4) Օւսթունցիները խոտամուտ են յանձնել իրանց գէնքերը թիւք կառավարութեան այն պայմանով, որ մասմէտական ազգաբնակչութեանն էլ նոյնն անել տրվի:
- 5) Մեծ պետութիւնները պէտք է երաշխաւորեն վերոգրված պայմանների խիստ զործադրութիւնը:

Օւսթունցիների այդ պայմանադիրը հիւպատոսները հաղորդեցին իրանց ղեկավարներին Ա. Պօլսում: Սրանք բանակցութեան մէջ մանելով սուլթանի կառավարութեան հետ, ահա՛ այս վերջինիս տիպած պատասխանը, որ հաղորդեցին իրանց բանակցող հիւպատոսներին Օւսթունցիներին ներկայացնելու համար:

- 1) Բ. Դուռը համաձայնվում է տալ ընդհանուր ամսիստիա, բայց պահանջում է Օւսթունից խրտաքսել այստեղ գտնվող շնչակեաններին:
- 2) Օւսթունցիներին թոյլ կը տրվի պահել իրանց զինքերը, բայց նրանք պէտք է յանձնեն Դուռն այն բոլոր պատերազմական զրաքանները (նորազոյն տեսակի), որ գտնվում են նրանց ձեռքի տակ:
- 3) Իսկ ինչ վերաբերում է քրիստոնեայ Նահանգապետին ու վարչութեան, Դուռն առարկում է, որ այդ գիշումները գտնվում են ի թիւս միւսնեաների՝ արդէն գիշանած Բարենորոգումների ծրագրի, և այդ պատճառով աւելորդ է մտցնել այդ կէտերը Նահա ներկայ պայմանների մէջ:
- 4) Իսկ տուրքերից ազատելու, տարեկան յայտնի գումար տուրքի և գինւորական տների վերաշինման նկատմամբ—Դուռն ինքն է մտադիր այդ հարցերի մասին ամմիշական կերպով քանակցել Օւսթունցիների հետ:
- 5) Վերջապէս, Դուռը պահանջում է ամմիշապէս վերադառնալ իրանց քնակավայրերը՝ Օւսթունում ապստամբած տասն հազար հայերին: Նա յանձնարարում է քանակցող հիւպատոսներին հսկել նրանց միջնաման վրայ Օւսթունից:

Բ. Վասն վերջիշեալ պայմանագրի վրայ պէտք է աւելոյցնել զարձեալ, Ռէյսէրի դործակալութեան տեղեկագրութեամբ, հետեւեալ կէտերը, որոնք բացառութիւններն են վերոգրված կէտերի:

1) Այն դէպքում, երբ Օւսթունի նովիտում քնակվող մասմէտականների մօտ գտնվին պատերազմական զէնքեր, բացի որսորդութեան համար յատկացվածներից, այնպիսիները (պատերազմական զէնքերը) կը զրաւվեն կառավարութեան կողմից նոյն եղանակով, ինչպէս եւ նոյն տեսակի զէնքերը, որ պատկանում են Օւսթունցիներին:

2) Ընդհանուր ամսիստիան չէ վերաբերում հասարակաց օրէնքի դէմ զործված յանցանքներին, որպէս եւ ամսիստիայով չէ վերացվում անվճար մագամ տուրքերը:

3) Բ. Դուռը չէ պնդում գինւորական տների վերաշինութեան վրայ, որոնք այրված են Օւսթունցիների ձեռքով, միայն թէ Օւսթունցիների կողմից առաջարկված պայմանների ընդունվելու սուլթանից խնդրված լինի իբրեւ մի շնորհ:

4) Կը նշանակվէ մի քրիստոնեայ կառավարապետ՝ համեմատ իմաստի Բարենորոգումների ծրագրի, որի վրայ համաձայնութիւն է արդէն եղած սուլթանի և մեծ պետութիւնների մէջ:

5) Վերջապէս, Բ. Դուռը մերժում է Օւսթունցիների մի փոքրամասնութեան կողմից եղած առաջարկը, որ վերաբերում է Օւսթունի պահակ զօրագնդի ընդմիշտ հեռացման այստեղից: Հետեւաբար այդ պահակ զօրագունը կը մնայ իր տեղը:

6) Օւսթունում ապստամբած փախտական հայերի ապագայ ապանութեան համար տնօրինութիւնները կը լինեն պետութիւնների հիւպատոսների հսկողութեան տակ:

Չէ կարելի մեր քաջ ապստամբներին մեղադրել չափազանցութեան մէջ իրանց առաջադրած պայմանների նկատմամբ: Այդ պայմանները չափաւոր են և արտայայտում են մի քաղաքապիտական հմուտ ընթացք, որ ցոյց են տալիս մեր Օւսթունցի ընկերները: Այդպիսով նրանք ապացուցանում են, որ ոչ միայն ունեն ոյժ ապստամբելու, այլ և ունեն ոյժ քաղաքապիտական՝ ըմբռնելու համար քաղաքական հանգամանքները և այնպիսի հողի վրայ դնելու իրանց պահանջները, որ գործադրութիւն ստանան. եւ նրանց հաշիւները վերջացան գրեթէ կատարեալ աջողութեամբ: Վրա հետ միասին նրանք բռնած են յաղթողի ընթացք, ինչպէս էլ պէտք է լինէր, և կշռերի ծանրութիւնն իրանց կողմը լինելով, անում են իրանց պահանջները բացարձակ ու անկեղծ կերպով:

Վանք սուլթանի պայմանագրին:

Ամենաառաջին պայմանը, որ գնում է սուլթանը, դա՛ չնչա կեանի երին արտաքսել Օւսթունից: Յիրաւի, այդ հտաբերի մամուլը վատ խորհրդականներ չունի, որոնցից ուսական հոտ է փչում: Նա քաջ հասկացել է, որ Օւսթունին անգամալուծելու, նրա թեւերը կտրելու, նրա յարառութիւնը խախտելու, նրա հմուտ կերպով տարված յաղթական ապստամբութեան վրէժն առնելու ամենագլխաւոր պայմանն է նախ ոչնչնալն այն մարդկանց, որոնցից էին կախված այդ բոլոր աջողութիւնները, այդ զօրութիւնները, այդ ընթացքը: Նա գիտէ, որ ամենից առաջ, ի հարկէ, պէտք է կտրել զլուսն ու թեւերը, մէկը դեկավարող, իսկ միւսն առաջ մղող ոյժեր:

Բայց սակայն սուլթանն իր այդ հաշիւներով ուշ հասաւ: Չնչականներն իրանց փառաւոր դործին արդէն շատ առաջ տարին Օւսթունում և հասան մինչեւ այն կէտին, որ սուլթանը ղեջանեց Օւսթունցիների բոլոր էական պահանջներին: Հինչականները ծուկ տվին գոռոզ միապետի մէջքն

իրանց առջև և հարկադրեցին ընդունել Օւթ-
թունցիների այն իրաւունքները, որ նրանք ամբողջ
չորս ամսւայ ընթացքում հերոսաբար պաշտպա-
նեցին իրանց արխուով և ձեռք բերին: Յիրաւի,
մեծ չեն այն իրաւունքները, որ այսօր ձեռք բերին
Օւթթունցիները, բայց նրանք այնչափի են, որչափ մի
փոքրիկ Օւթթուն առանձին մնացած հնարաւորու-
թիւն ունէր ձեռք բերելու՝ մեր դատի համար ներկայ
քաղաքական աննպաստ պարագաներում: Վերջա-
պէս նրանք այնչափի են, որչափ իրանք Օւթթուն-
ցիները հարկ համարեցին պահանջելու ներկայումս:

Օւթթունցիները պահանջեցին, որ միայն այն
ժամանակ նրանք կը յանձնեն իրանց զէնքերը, երբ
թիւրք ազգաբնակութեան ձեռքից էլ դրաւձն
զէնքերը:

Սուլթանն ընդունեց այդ պահանջը:

Օւթթունցիները պահանջեցին ընդհանուր ամ-
նիստիա:

Սուլթանն ընդունեց այդ պահանջը, բայց առու-
թիւն անելով Հնչակեանների համար:

Օւթթունցիները պահանջեցին մի քրիստո-
նեայ կառավարչապետ:

Սուլթանն ընդունեց այդ պահանջն էլ:

Օւթթունցիները մերժեցին վերաշինել իրանց
քանդած ու ալրած զինւորական տները:

Սուլթանն ընդունեց այդ մերժումը ևս:

Վերջապէս, սուլթանը պարտաւորվեցաւ տը-
նօրինել եւրօպական վեց մեծ պետութիւնների ան-
միջական հսկողութեան տակ Օւթթունում ա-
պաստանած 10-15,000 հայ փախստականների ա-
պահով դարձը և նորից հաստատվելն իրանց գիւ-
ղերում և եւրօպական հսկողութիւնը հայցել այդ
փախստականների ապագայ ապահովութեան համար:

Սուլթանի այդ կատարեալ պարտութիւնն ու
փախուստը բոլորովին դաւեշտական կերպարանք է
առնում, երբ կարգում էք իր պայմանագրի բա-
ցատրական կէտերի յօդուած երրորդի երկրորդ մա-
սը: Վրա մէջ նա տարօրինակ ու տխմար միա-
մտութեամբ թոթովում է վախով, թէ Օւթթ-
թունցիների առաջարկած պայմանների ընդունվե-
լը իր, սուլթանի, կողմից՝ թող չը նկատվէ իբրեւ մի
զինում ապստամբներին, այլ թէ սուլթանական
„շնորհը“... Վրանով սուլթանն ուզում է գէթ
արտաքուստ պահած ունենալ իր պատիւը և ծած-
կած լինի իր խոյտառակ պարտութիւնը: Բայց
ինչ կատակ. իրողութիւնն այնտեղ է, և այդ ի-
րողութիւնն ամբողջ աշխարհին յայտարարում է
հետեւեալը. —

Հայ յեղափոխական ոյժը յաղթեց դուռ ու
արխնախում միապետին:

Կեցցէ՛ Օւթթուն.

Կեցցէ՛ Հնչակեան Կուսակցութիւն:

ՆՊԱՍՏ ԶԷՅԹՈՒՆԻ.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅՈՒՅԱԿ.

Թիւրքիւ. — „Անշարժ“ քաղաքի հետեւեալ անձերից.
Շրջող 15 օսմանան ոսկի, Լօրէնցիոս և Երկաթ 30-ական օսմ.
ոսկի, Արշալոյս և Արիստակէս 40-ական օսմ. ոսկի, Մեղու 30
օսմ. ոսկի, Ա. Բ. 25 օսմ. ոսկի, Նապաստակ և Միքէ 20-ական օսմ.
ոսկի, Յաջողակ 15 օսմ. ոսկի, Օ.Պ. 8 օսմ. ոսկի:
Գ. Պ. քաղաքի Հնչակեան Մամաճիւղից 177 օսմ. ոսկի
ԲՕԼԳԱՐԻԱ. — Փիւլիպպէ քաղաքի Հնչակեան Մամա-
ճիւղի միջոցով 1570 ֆրանկ: Մանրամասն ցուցակը յետոյ:
Սիւլիստրէ քաղաքից 7 ֆրանսիական լիրա և 20 սանտիմ:
Երթող՝ Ս. — Կալիքէ քաղաքից Մ. Գ. օֆֆի միջոցով 3
անգլիական լիրա և 2 շիլլինգ:
Փրանսիւ. — Պարիզի հայ ուսանող. հայրեն. Միութիւնից
101 ֆր.:

ԶԷՅԹՈՒՆԻ ՆՊԱՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

(ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՅԻՑ)

*** 6 յունուար 1896.

Օւթթունի մեր քաջ ընկերները յաղթանակէ յաղ-
թանակ առաջ կը քալեն, միշտ յաջող և իրենց այդ
յաջողութիւնները սարսափ ազդեցին թիւրք ժողովր-
դին և կառավարութեան վրայ: Չէթթունցիի կապարը
և անգլիացիի ժէնէրալներու (այդպէս կանուանեն չըն-
չակեան առաջնորդները) ռազմագիտութիւնը ահ կը
թողու ամենուն վրայ: Ինչ որ արդէն գուշակած և գը-
րած էինք ձեզ, գրեթէ իրականացած է: Այսօր 36
վաշտէ բաղկացած թուրք բանակը համարեա թէ ցըր-
ուած վիճակի մէջ է: Մարաշի Ամերիկեան միսիօնար
Մըստրը 1ի մէկ նամակը կը յայտնէ, որ մինչև հի-
մա զօրքերէն 10,000, իսկ պաշկապօղուգներէն 4-5
հազար կորուստ եղած է. 1,500 վիրաւորներ կը դար-
մանուին մզկիթներու և եկեղեցիներու մէջ ի Մարաշ:
Քիլիսի վաշտը բոլորովին, Այնթապի վաշտն ալ գրե-
թէ նոյնպէս փճացած են. հիւանդութիւնը մեծ կո-
րուստ կուտայ: Այնթապի թուրք մը, որ երէկ տե-
ղըս եկաւ Գերմանիկէն, կըսէ թէ բոլորն ալ կուրծքէն
վիրաւորուած են: Կը լսենք թէ լիազօր հրամանատար
Մուստաֆա Հէլմի փաշա, որուն քաջութիւնները ա-
ռասպելներու պէս կը պատմեն այստեղի թուրքերը,
վիրաւորուած և գերի բռնուած է. իրեն յեղ նոր
հրամանատար մը գնաց անցեալ շաբաթ: Երկու օրէ ի
վեր կը խօսին իրատէի սէնիյէի վրայ, որ հրամա-
յած է մինչև երեք ամիս չը յարձակիլ Չէթթունի վրայ
ու զորքը պատսպարել Մարաշ, 4 վաշտ միայն լիւր
թողով: Բայց այս իրենց հաշիւն է, տեսնենք Չէթթու-
նը պիտի անսայ և ինք չը պիտի յարձակի:

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԳԵՐԻ.

1895 ՀՈԿՏ. 27-ԻՆ ՄԻՆՁՆԻ 16 ՆՈՅ. 1895.

(Շարունակութիւն) *)

ԱՊՏ ԶԷՅԹՈՒՆԻ ԶՕՐԱՆՈՅՆ.

Հայերը ապա յարձակեցան պալատի վրայ՝ և
անհամար աւար առնելով սկսան կրակի տալ պալատը
և պաշտօնեաների տները: Քիլիսի գիւղապետ ճուտ-
տուր օղլը, Մարտիրոս անուն քաջ ծերունին գիտ-
նալով կառավարական արկղի տեղը, ուղղակի հոն կը
գնէ և իր գիւղացիներով աւարի կուտայ, ապա բարձ-

*) Տես „Հնչակ“ Nrs 23 և 24, 1895 թ. և Nrs 1 և 2, 1896.

րացած պատշգամբի վրայ կըսկսի պոռալ փախչողների ետեւէն. «ղաջմա, զապախճը տօնդուզ, զաջմա վարան էրմէնի տիր, պոռնա օմուզի սալմալը Զէյթունի տէր-լէր»... (մի փախիր, դըռմ ուտող խող, մի փախիր, եկողն հայն է, ասոր թիկնոցաւոր Զէյթունցի կըսեն)...

Նոյն օրը, Հայերն աւարն առնելով ետ դարձան, ումնք դէպի ֆրանսուզ և կէս: ալ դէպի Ապաւն մի-անալու մնացած հայերին:

Զի մոռնամ ասել, որ կռուի մէջ մեծ քաջա-գործութիւններ կը կատարէին ու ազգասիրաբար միմեք ու խեղճ հայ ընտանիքներ կը փոխադրէին Մարաշի հռչակաւոր ջորեպան Բէշիշեան Սարգիս և Մանուկ անուն եղբայրները, որոնք 30 անասուններով կեսա-րիայէն դարձած աստն, հանգիպելով զօրանցի պա-շարման, թողին բեռները և սկսան իրել ևս կռուիլ:

Նոյեմբերի մինչև 5-ը խաչեր քէհեան և փանոս ա-ղան յաղթելով քերթի, Նեախի մեծ սէկմէները՝ մօտեցեր էին մինչև Բէշիշի կէ թըքաբնակ գիւղը, ուր հաւաքուեր էին թըքական բոլոր սէկմէները: Նոյն օրը յաղթելով զոցա եւս, աւարեցին ամենքին և սկսա՝ մօ-տենալ Ղալիշլին. սոցա միտքն էր փշել թշնամիի բանակները և հասնել Եէնիճէ-Վալէի, Տուն-Վա-լայի և Անապատի հայաբնակ գիւղերը, ուր 400 տուն հայեր պաշարման մէջ էին թըքերէն և ազատել Մարաշի հարուստ Շօրվաճեան ընտանիքը, և ֆը-րանչիսկեան միաբանութեան երեք վանքերն ու ըս-պանեացի կրօնաւորները, որոնք բանտարկուած էին թըք-քերի կողմից: Արդէն Նոյեմբերի 3-ին յիշեալ կրօ-նաւորներն ու հայերը նամակ էին գրեր Ապաւն ե-ղած հայկական բանակին և Զէյթունին, որպէսզի ի-րենց օգնութեան հասնին: Պ. Հրաչեան իր հեան ա-ռած 200-ի մօտ հայեր, Պոնտոսի ճանապարհով կիջնէ Ենիճէ Վալէ, Նոյեմբերի 6-ին, երկուշաբթի օր: Այդ օր առաւօտուն դեռ հայկական բանակը չը հա-սած ու չի միացած Մարաշէն կը գայ 500-ի մօտ կա-նոնաւոր զօրքեր և 1,000-էն աւելի պաշտպօղութեան, Ղալիշլին, Բէշիշի, Նեախի և Բիւրթլին, ո-րոնք առաջին անգամ կիջնեն Եէնիճէ-Վալայի Մու-ճիկ-Տէրէ անուն հայաբնակ գիւղը: Զօրքերը ներս մտածին պէս կը սկսին կրակել և կոտորել բոլոր հայե-րն ու նոցա աները: Զօրքերը կը դիմեն ուղղակի այն վանքը ուր ֆրանչիսկեան միաբանութեան Եէնիճէ-Վալէի մեծաւոր Պատրի Սալվաթոր լիլին (P. Salvatore Lili di Capadocia), որ բնիկ Խաթալացի, Նա-պօլի նահանգի Ապաւն օչիյա գաւառի Նեա-թունօ գիւղէն է: Կրօնաւորը որ մինչև այն ժամա-նակ մեծաբանակ գումարներով ինքզինքը պաշտպանել տուած էր թիւրք պաշտպօղութեան, զօրքերն հասա-ծին պէս կուզեն սպաննել զինք. բայց Բիւլէի-ը աղա անուն իր թիւրք բարեկամը չի ուզեր սպաննել տալ: Այն ժամանակ զօրքերի հարկաւորաւոր կը հը-րամայէ զինւորներին սպաննել նսի Բիւլէի աղան և ապա Պատրի Սալվաթորը: Բիւլէի-ը աղան վախէն մի կողմ կը քաշուի և զօրքերը իրենց սուրներով պա-տառ պատառ կը բռնեն յիշեալ կրօնաւորը և ապա վանքը աւարելով կրակի կը տան...

Զօրքերը դեռ Մուճիկ-Տէրէի գործը չաւար-տած խաչեր քէհեան և մի խումբ Զէյթունցիներ առնելով Բէշիշի, կը հասնին Եէնիճէ-Վալէ և կաղատեն մեծ վանքը, ուր կային ֆրանչիսկեան երկու սպանիացի կրօնաւորներ և մի սպանիացի աշխա-

տաւոր եղբայր, զորս յանձնելով մի քաջ խմբի, կը հասցնեն ֆրանսուզ, որտեղէն Զէյթուն, ուր այժմ շատ հանգիստ են, թէ և զուրկ իրենց բոլոր գոյքերէն, գրե-թէ մերկ ապաստանած:

Հաղիւ թէ խաչեր քէհեան զուրս կը գայ Եէնիճէ Վալէէն կրօնաւորների հետ, զօրքերը Մուճիկ Տէրէէն զուրս կը գան և կը մտնեն Եէնիճէ-Վալէ ու աւարի կը տան նսի հայոց եկեղեցին ու ֆրանչիսկեան վանքը ուր նուազական հաշուով, շէնքն ալ միասին հաշ-ուելով, 25,000 ոսկւոյ արժողութեամբ սպասներ, գրքեր և կահարասներ եղած են:

Աւարը վերջնալէն յետոյ, երբ զօրքերը կսկսին կո-տորել հայերը, վրայ կը հասնի հայկական բանակը պ. Հրաչեայի առաջնորդութեամբ, որ կը գար Ապաւնէն: Կրսկի երկու կողմէն ևս կատաղի հրացանաձգութիւնը, այդ միջոցին ետ դառնալով օգնութեան կը հասնի խա-չեր քէհեան իր մեծ խմբով: Կռիւր կատաղութեամբ կը տեւ առաւօտէն մինչև երեկոյ: Ետ քաջագոր-ծութիւններ կանեն պ. Հրաչեան, խաչեր քէհեան, փա-նոս աղա Մխալեանը, դարձեալ 20 լազեան փա-նոսը և սորա նման անձնուրաց հայրենասէրներ մա-վըլարի գիւղապետ հաճի Մարտիրոս Շատալախ-եանը և Նախիկի ոստիկան Յովակիմ Ղուկաս-եանը: Իրիկնադէմին թըքական բանակը յաղթուելով կըսկսի փախիլ: Հայերէն ոչ մի քիթ չի արիւնիւր, թըք-քերէն կը զարնուին մի հարկաւորաւոր և 40-ի մօտ զօր-քեր ու բաշխօղութեան: Մութը վրայ կը հասնի, թըք-նամին կսկսի փախիլ, եթէ հայերը զոցա ետեւէն վա-զէին, կարողէին շատերին կոտորել, բայց սպառած լինելով իրենց ռազմամթերքը ստիպուած կը մնան իրենց տեղերը բաւ համարելով եղած կոտորածը: Նոյն օրը Մարաշի կառավարութիւնը սարսափէն պահել կը տա Մարաշի շուրջը, վախնալով որ հայերը Մարաշի վրայ պիտի յարձակին: Արովշետե այդ կռիւր Զէյթունի ան-մենամեծ կռիւներէն մէկն էր, նման Զախըն-Տէրէի ահեղ և ցորանցի յաղթապանծ կռիւներին: Նոյն պատերազմի մէջ մեծ քաջագործութիւններ կանեն նաև հերոս Ջալ-լատի հերոս եղբայր Կիրակոսը և քեռորդի Ղօճան որոնք պ. Հրաչեայի հրամանաւ կը հաւաքեն ֆրանչիսկեան-ների վանքէն մնացած գոյքերի թանկագինները երեք բեռ, մօտ 500 ոսկւոյ արժողութեամբ, զորս ապահով հասցնելով յանձնեցինք յիշեալ սպանիացի կրօնաւոր-ներին, որոնք խորին գոհունակութիւն յայտնեցին Հըն-չակեան Առաքելութեան գործիչներին իրենց ցոյց տը-ւած համակրանքի համար:

Նոյն օրը հայերը կաղատեն Եէնիճէ-Վալէի երեք հայ գիւղերը, ընդամենը 150 տուն, իսկ Տունգա-լայի, Անապատի գիւղական համայնքներէն 250 տուն թիւրքերը ամբողջովին այրած են իրենց բնակիչներով, որոնց մէջէն փախեր և ազատուեր են միայն 2 հոգի: Ե-նիճէ-Վալէէն երկու օր յաջ ընտանիքները մեծ նեղութեամբ կը հասնին մինչև ֆրանսուզ, մերկ, բոկիկ, քաղցած, որին միացած էր այդ օր բնութեան խստու-թիւրը ձիւնն ու փոքր: Յաջորդ օրը թիւրք փախա-տականները վառեր են մնացած հայ գիւղերն ու ֆը-րանչիսկեանների վանքը:

Այն ինչ հայկական բանակը զուրս կը գայ Ա-պանէն, թիւրք գիւղացիները բանակցութեան կը մըտ-նեն Նախիճ Օղլիի հետ, որը վերստին կաղած էր իր սէկմէնը այն կանոնաւոր զօրագնդի միջոցով որ Նոյեմ-բերի 5-ին եկեր էր Ատանայի կողմերէն և կը բաղկա-

նաք 500 կանոնաւոր զօրքերէ: Թիւրք գիւղացիները իմաց կը տան զօրքերին, հակառակ իրենց ցոյց տրուած բարեկամութեան, որ Վապանի մէջէն Զէյթունցիները մեկնեցան և մնացին լոկ Վապանի հայերը, եկէք և գըրաւեցէք... Թորքական բանակը Սիսիէի վրայօր ճանապարհ կեղծէ գէպի Վապան:

Վոյեմբերի 5-ին Հնչակեան Կուսակցութեան գործիչներէն պ. Ապահը, մեկնած էր գէպի Վապան միանալու պ. Հրաչեայի հետ և արշաւանք գործելու գէպի Ատանայի Կուսակցութեան գաւառները: Բայց այնտեղ չի գտնելով հայկական զօրագուններ, ինքը կը մնայ իր ընկերներով Վապանի մէջ մինչև նոցա վերադառնալ: Իսկ Պոլսեցիները մէջ կար մի գունդ Զէյթունցիներ:

Վոյեմբերի 7-ին, երեքշաբթի օր իրիկնապէսին, թըրքական բանակը, մօտ 2,000 հօգի, կը պաշարեն 4 կողմերէն Վապանի հայկական գիւղը, որ կը բաղկանայ 300 տունէ և ուր կար հայերի ամենամեծ հարստութիւնը, 50,000 քիլէէն աւելի ցորեն, 8,000-ի մօտ այծեր և մի քանի հազար կովեր ու գոմէշներ... Եւսթիւ-Օղլին նախապէս լուր կուղարկէ պ. Ապահին, որ «Անձնատուր կը լինի, թէ ոչ պիտի զարնենք»... Պ. Ապահը լակոնական ոճով կ'ը պատասխանէ՝ «Պատրաստ ենք զարնելու»... Այս պատասխանին վրայ 20-ի չափ չէրբէզ ձիաւորներ դաշտի վրայէն կսկսին քշել հայերի 500 եղերը: Այդ միջոցին «Աւօ» զօրագնդի տասնապետներէն, ծանօթ կտր'ճ, Շիվիլիկցի Կարապետը, մէկ այլ ձիաւոր հետն առած, կիջնէ դաշտ և ուղղակի կը քշէ չէրբէզներ ի վրայ, որոցմէ երկուքն ըսպաննելով կաղատէ եղները... Պ. Ապահը կը կարգադրէ և բոլոր անցքերի վրայ Վապանցիներէն պահպաններ կը դնէ: Սակայն երկուստ Վապանցիները ինչպէս թողնին Վեռն վեցերորդն ու փախան, նոյնպէս կը թողնեն և գիշերանց կը փախն: Արշալուսին թշնամին բոլոր կողմերէն կը յարձակի Պ. Ապահի գնդի վրայ, որոյ քով մնացեր էին երկու Վապանցի քաջեր և մի Վապանցի հերոսուհի Օրիորդ... 7-րդ քաջ գունդը առիւծաբար կը կռուի 2,000 թշնամու դէմ մինչև երկու ժամ և կսպաննէ 12-ի չափ զօրքեր: Կը գիմարեն այնքան, որքան մնացող հայերը կարողանան վեր բարձրանալ ու փախչել, իրենց հետ տանելով մի քիչ ծածկոցներ և իրենց արջառների մի մասը:

Այժմ թշնամի բանակը նստեր է Վապանի դիմաց դաշտի վրայ և օր-օրի աւելնալու վրայ է. օսմանեան վերջին կռիւն է այս՝ թիւրքը Սանճաղը Շէրիֆը քաշած է, կրօնի համար ամենքը զինուած են, նոյն իսկ կիները և կը կատարեն այնպիսի վանդալական խռովութիւններ, որոնք յատուկ են միջին դարուն, որոնք գործեր են ճին կիզ խան, լէնկ թիմուր և Ալփասլան, հրոյ ու սրի կը մատնեն այն տեղերը, ուր ոտք կը կոխեն... Թշնամութիւնն ընդհանրացաւ և կոտորածն ամբողջ Կիլիկիայի մէջ, մեր լսածի համեմատ խիստ մեծ է. թիւրք չէ կարելի ստուգել, սակայն այնչափ ծանօթ է, որ կոտորածն ու աւերը շատ մեծ են. — Թիւրքիայի վերջին դատաստանն է, որ կը կատարուի... Թիւրքերի կարծիքով Նեուր եկած է աշխարհ և աշխարհի վերջն է սա... վայն անոր, որ դեռ անտարբեր է... Թշնամին կատաղած գաղան է դարձեր... Զորերը արիւն կը հոսեն, որոնց հետ կը գնայ և անտարբեր ու անզգայ հայր...

Թիւրք զօրքերը կը մտնեն Վապան, կաւարեն բոլոր տները, վանդալական վայրագութեամբ կը կոտորեն ու կը չարաչարեն Վապան մնացած հայ հիւանդները, ծերերն, պառաններն ու մանուկները և տները կը հըրդեհեն: Մի հայ ծերունի միայն հայհոյելով իր կուրծքը կը բանայ թշնամիի սուրերի առաջ: Մի քանի ընտանիքներ մահաւորականութիւն ընդունելով կաղատին: Իսկ կիները պղծելէ յետոյ փորերը խաչաձև կը պատեն երախաների ոտքերէն բռնելով քարերին կը զարնեն, որոց գլուխները տախտակի նման կը տափակնան: Գաղանաբարոյ թշնամին ուր գնայ, նոյն եղանակով կը վարուի բոլոր հայերի հետ, ինչպէս նոյնն արեր է Եւրփուղի հայերին. միջդեռ մենք մինչև այսօր պատուով կը պահենք իր 600 զօրքերը, պաշտօնեաները, Զէյթունի 30 տուն թուրքերը, և Թանիրի ու Տէօնկէլի թըրքաբնակ գիւղերը, որոնք մեզ անձնատուր եղեր են և մենք անոնց մէկի քիթը չենք արիւններ... Թուրքն իշային աքացիներով իշու խաղ կը խաղայ քաղաքակրթութեամբ աշխարհի առաջ և դեռ քիչ կը գտնէ խմած հայի արիւն իր սրտի բոցը մարելու համար... և սակայն պիտի խեղդվի...

Վապանցիներուն համար օգնութիւն պատրաստուեց փախչելու: Այն օրը սաստիկ ցուրտ էր և ձիւնը խիտ խիտ կը տեղար: Վիպաղրողներուն կը թողունք նկարագրութիւնն այն տառապանքներու ու չարաչարանքներու զոր կրեցին խեղճ Վապանցիները մինչև որ հասան Ֆրանուզ, որ Վապանէն ութ ժամ հեռավորութիւն ունի: Ամենէն սրտաճմիկ էր այն եղիկի տեսարանը, զոր կը ներկայացնէին փոքր երախաներն ու աղջկանքը փախած աւտեն — բոբիկ, մերկ, գլխաբաց, անօթի, ձիւնով ձերմակած՝ ձերմակ հրեշտակներու նման էին. կը փախէին այն ձիւնոյի ձեռքէն, որ երախաներուն իսկ չի խնայեր... Վերջապէս Վապանէն յետոյ, Պոլսուղիներն ալ փախան. միայն թէ սոցա ուտեստների և արջառների մեծագոյն մասը աղատեցաւ:

Այժմ երկու գլխաւոր ապստամբաւայր կազմուեցաւ. մին Զէյթուն և միւսը Ֆրանուզ: Վերջինս որ միայն 300 տուն ունէր, այժմ եղեր է 2,000 տուն: Փողոցներու և տուններու մէջ շարժելու տեղ իսկ չէ մնացեր, բաղնիքները լեցուեր է այնտեղ խառն ի խառն, մերկ ու անօթի: Մօտաւորապէս 15,000 բնակիչ ունի այժմ Ֆրանուզ: Իսկ Զէյթուն բուն քաղաքը երեք անգամ աւելի դարձաւ, ուր կայ այժմ մօտաւորապէս 25,000 բնակիչ: Ֆրանուզի մէջ հաւաքուած են հետեւեալ գիւղերու բնակիչները. — Ալաճաճիներ, Պուղուրու, Թէլէմէլիքի համայնքները. Եէնիճէ-Գալէի երեք գիւղերը. Շիվիլիին, Անտերունէն փախչողներէ մեծագոյն մասը. Թափուզ, Սիսիէ, Կապան, Պոլսուղի, Տաշ-Օլուզ, Կոկիսոն, Քիւրէճ, Կէօլ-Փուշար, Տէյիւրմէն-Տէրէ, Ճամուս-Հէյիք, Թէքիք: Զէյթունի և Ֆրանուզի մէջ անշարժ մնացին իրենց տեղերը միայն Մափըլար, Աղարէկ, Ղարաղաճ, Ալաբուզան, Աւագ-Վալ, Հաճի-Տէրէ և Վանք գիւղերը: Իսկ Զէյթունի գաղտի վրայ՝ Եզիտէր և Մուրթատար հայաբնակ գիւղերը նմանապէս դեռ կը մնան իրենց տեղերը:

Վապանը անուկելէ մէկ օր յետոյ, նոյեմբերի 8-ը, չորեքշաբթի օր, թշնամի բանակը կեղծ և Պոլսուղի, կը գրաւէ: Նոյն օրը Եէնիճէ-Գալէէն՝ պ. Ապահին օգնութեան հասնելու համար պ. Հրաչեան՝ 75 քաջերով մինչև Պոլսուղի կը հասնի, ուր միայն թշնամի

բանակին հանդիպելով և չունենալով այլ միջոց բացի հերոսաբար կռուելը, կըսկսին երկու կողմէ ևս կատաղի հրացանաձգութեան, որ կը տեւէ մի ժամ. թշնամին երեք մեռեալ զինուոր կը թողու Պոլստուգի մէջ և ինքը կըսկսի փախչել: Պոլստուգէն դուրս փախչելով թշնամին գնաց և բանակ դրաւ Սիսնէի աւերակներէ առաջը, Պոլստուգէն մի ժամ հեռու: Այդտեղ, հայկական գունդը բաւական ցորեն ազատելով ետ կը դառնայ ֆրոնտը:

Թշնամին սպաններ էր նոյն իսկ Պոլստուգի մէջ պառաւ հիւանդները: Ամբողջ կապանի և Պոլստուգի մէջ մորթուած, ժայռերէ վար գլորուած հայերի թիւը 50-ի մօտ էր:

Սոյն կոտորածի վրայ, մանաւանդ կապանի թուրք գիւղի արած խարդախութեան համար Զէյթունի և ֆրոնտուգի հայերը կատաղելով՝ նոյեմբերի 10-ին մի մեծ զօրաբանակ կազմուեցաւ, պ. Հրաչեայի, պ. Ապահի, Աւետիքէի, Կիսիանեանի և պ. Կարապետ Տէր-Յակոբեանի հրամանատարութեան ներքեւ, որ նոյն օրը ճանապարհ ելաւ դէպի կապան: Զէյթունէն մեկնող զօրաբանակը հազիւ 450 հոգի կար, մինչև որ Չուգուր-Հիսար հասաւ, հայկական բանակը բաղկացաւ ճիշտ 1,200 քաջերէ: Այդտեղ հայկական բանակը բաժնուեցաւ երկուսի. մին պ. Ապահի և պ. Հրաչեայի հրամանատարութեան ներքեւ. սոցա բաժինը բաղկացած էր Զէյթունի Սուրենեան և վերի թաղերի քաջերէն, որոնք ուղղուեցան դէպի կապան:

Իսկ Պոլ-Պայիրի և Կարկալարի առիւծները, Աւետիքէի, Կիսիանեանի և Կարապետ Տէր-Յակոբեանի հրամանատարութեան ներքեւ, ուղղուեցան դէպի Սիսնէ՝ թշնամի բանակի ետեւն առնելու համար:..

Միւս հայկական զօրաբաժինը կը պաշարէ թշնամին ետեւի կողմէն:

Նոյեմբեր 14-ին մի գունդ հայեր, «Աւօ» զօրագնդի անդամներէն Յակոբ ջան Աւագեանի առաջնորդութեամբ, գացին Կապան ուր տեսան այրուած բոլոր հայկական տները: Այդտեղ պատահեց միայն մի վիպական դէպք.— 10-ի չափ հայ մանչեր, ամենամեծը ութ տարեկան, մի խոռոչի մէջ մտած էին և խոռոչի բերանը քարերով ծածկած: Հինգ օր շարունակ մնացեր էին այդտեղ քիչ մը հացով. անվախ ու ծիծաղէրես. կազատեն զանոնք և կը բերեն ֆրոնտը:

Այժմ բնակիչները փախան, 40-ի մօտ հայկական գիւղերն ամեն ալ այրուած ու մոխիր դարցած են... Եթէ օգնութիւն ուշանայ, այդ բոլոր փախստականները այլ ևս կորած են: Թէ մեր կռիւներուն համար և թէ այդ թշուառներուն համար նիւթական օգնութեան անմիջական և ամենաստիպողական պէտք կայ: Հայութեան Վերջին յոյսն ու լոյսը Զէյթունն է և միթէ նա ալ պիտի անօգնական մնայ հայերու կողմէն: Ինչով ուրեմն պիտի շարժի մեր ազգը, եթէ այսպիսի պատմական ճգնաժամի միջոցին ալ մնայ անտարբեր և կամ վհատած:

ՏՕՐԱՅԻ:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

1895 ՆՈՅՆՄ. 17-ԻՆ ՄԻՆՉԵՒ 23 ՆՈՅՆՄ. 1895.

24 ՆՈՅՆՄ., ԱԶԱՏ ԶԵՅԹՈՒՆԻ ԶՕՐԱՆՈՅԻՆ.

Սը շարունակեմ տեղեկագիրս: Ամենէն առաջ այն ըսեմ որ մինչև ցարդ Զէյթունցիներէ վհատած

չէ. Զէյթունի մէջ երբէք չէ անանուած այսքան համերաշխութիւն: Իսկ բաղմութիւնը ֆրոնտուգի և Զէյթունի մէջ այժմ 40,000-էն աւելի է: Ամեն կողմէն լեցուեցան. սոյն երկու գլխաւոր կենտրոնների մէջ հայկական բոլոր գաւառներէն կարելի է մարդ գտնել աստ և ֆրոնտը: Մեր և ժողովրդի նշանաբանն այն է, որ կամ ամբողջովին կոչնչանանք և կամ կազատուինք: Երեխաներն իսկ ուխտեր են կռուել քարով և երբէք անձնատուր չը լինիլ: Իսկ ժողովուրդը ոչ թէ ինքնապաշտպանութեան կը դիմէ միայն, այլ տաներկու անգամէն աւելի արշաւանք և յարձակումներ գործեց: Ամեն բան մեր մէջ յաջող և կարգապահութեամբ ընթացաւ մինչև ցարդ: Ժամերով հեռի հայ պահակների գնտեր, ձիաւորներ և որսորդական խմբեր, կը շրջին շարունակ և չեն թող տար որ թշնամին իր եղած տեղերէն մի քայլ ասդին անցնի:

Մինչև այսօր 17 Նոյեմբերէն ի վեր ոչ մէկ արտակարգ դէպք պատահած չէ տեղ մը, բացի հետեւեալէն.— Կառավարութիւնը Մարաշէն հինգ հայ աշակերտ (որոնց մին կրօնաւոր) ուղարկեր էր այստեղ իւր քօմիսիօն, առանց թղթի, և առաջարկեր էր մեղի երեք պայման, բերանացի կերպով, որ հետեւեալներն են.— «Կայսերական կառավարութիւնը Զէյթունցիներին կը ներէ,

1) Եթէ իրենց զէնքերը յանձնեն կառավարութեան:

2) Եթէ կառավարութեանէն բռնի գրաւած թընդանօթները, մարթիկները և բոլոր տէրունական գոյքերը ետ գարձեն և գերի զինուորները նստեցնեն զօրանոցին մէջ:

3) Եթէ խռովարարներն, ասպատակապետները իսկոյն ձերբակալեն և յանձնեն:»

«Սուլթանը մեզ ներեց, կասեն, բայց մենք իրեն չի ներեցինք... և իր կասկածելի քօմիսիօնը, որոյ մէջ կային Մարաշի ծանօթ վատեր, բանտարկեցինք զօրանոցի մէջ: Կը սպասեինք ֆէրիդ Մսթաֆա Բէմ-վի փաշան, որ երեք օրէն պիտի քալէ եղեր մեր վերայ, բայց ինն օր եղաւ և դեռ գալու վրայ է:

ՏՕՐԱՅԻ:

ՄԱՆԱԹԻԱՅԻ ԴԵՊԷՐ.

Վաղաքիս դէպքը նշանաւոր է այն տեսակետով, որ նա կոտորածէն աւելի ուրիշ կերպարանք մը ունէր. կանոնաւոր պատերազմ մ'էր մէկ կողմէն կառավարութեան հաշուով զինուած թուրք, քիւրտ և այլ և այլ աշիրաթներէ կազմուած պաշտպանութեան և միւս կողմէն արտաքին որ և է օգնութեան զրկուած և իր օրհասական ժամն իր առջև պատկերացած յուսահատ հայերու միջև: Այդ յուսահատութիւնը սակայն վհատեցուցիչ չըլլալէ վատ տեղւոյս հայ հասարակութիւնը լցուց տեսակ մը անընկճելի առիւծի քաջութիւնով. մեր օրհասը մեզ աւելի քաջութիւն և խրախոյս ներշնչեց: Քաղաքիս բոլորտիքը և հեռաւոր վայրեր գրտնուող ամբողջ քիւրտները հրաւիրուած էին. Ի Յ Օղլու, Ճանպէկ, Թաշիքան, Ալիքան, Խաւիքան, Մօլիքան, Զրաւքեան, Շիրոյ, Աղճէ-Տաղ, Հէքիմ-Խան. այս ամեն աշիրաթներէն 20,000-ի չափ եկած էին Մալաթիա քրիստոնեաները ջարդելու, ասոնց հետ միացած քաղաքիս տաճիկ հասարակութիւնը և մօտի գիւղերուն, ինչպէս Պանաչի, Պարղուչի, Թէթտէ, Ատաֆի, Արմիտի, Օր-

տու չի, Հին քաղաքի. այս տեղերուն հասարակութիւնն ալ կըլլայ ահագին բանակ մը:

95. Հոկտեմբեր 22-23 երկուշաբթի առտու մը սկսան շուկային մէջ կոտորած ընել, կողոպտել, շուկային մէջ յանկարծակիի բերելով՝ շատ մարդ սպաննեցին և սկսան թաղերը յարձակել. ամեն տուն կողոպտեցին, բնակիչները սպաննեցին, այրեցին, սակայն բաւական ժողովուրդ զենեալ քանի մը տեղ ապաստանեցաւ, 3,500 Նորաշէն եկեղեցին, խումբ մը Պօն-ճուզլեան թաղը, խումբ մը Չէքեմենց թաղը, խումբ մը Կաթողիկոսաց թաղը: Այս ամեն խումբերն ալ կըրակ կընէին քիւրդ բաղմունքեան վրայ, բայց ամենէն զօրաւոր և հաստատուն դիրքը Նորաշէն եկեղեցին էր: Աս եկեղեցւոյ տանիքի բոլորտիքը քարէ թափանեցր շինելով քաջ երիտասարդներ զենեալ մէջը նստած և կարգ մը երիտասարդներ եկեղեցւոյ մէջի պատուհաններէն զէնք կը նետէին: Զորս օր չորս գիշեր տեղացայտ սոսկալի կռիւր և եկեղեցւոյ շուրջը պատած 15-20 հազար բաղմունքիւնը կարող չեղաւ եկեղեցին առնելու, որովհետեւ հրացանաձգութիւնը հայերուն կողմէն այնքան խիստ էր, որ անկարելի դարձուց թշնամուն առաջաւորացութիւնը. թէպէտ ասոնք շատ մը յարձակումներ ըրին, սակայն այդ յարձակումները միշտ ապարդիւն եղան և միշտ մեծ կորուստով ետ մղուեցան: Եկեղեցւոյ առջև Աղձէ-Տաղի քիւրդներն աշիրաթէն վէրի-Օղլու անուամբ նշտնաւոր առաջնորդը զարկին սպաննեցին. Մալաթիայի երեւելի ասպատակապետ մը, Հաճի Խաղուպին տղան Մուհամմէտն ալ ըսպաննուեցաւ, հազարէն աւելի քիւրտեր ևս ընկան հայ քաջերու գնդակին տակ. թէ եկեղեցւոյ շուրջը և թէ ուրիշ թաղերու մէջ հայ երիտասարդներն այսպէս դիւցազնաբար կուռեցան, սպաննեցին, սպաննուեցան: Երկուշաբթիէն մինչև հինգշաբթի իրիկուն իրենց զէնքերը դիւցազնաբար պահելով ուրբաթ առաւօտ կառավարութեան միջամտութեան և շատ մը խրատին, յորդորանցը և խոստումներուն վրայ յանձնատուր եղան. այդպիսով կռիւր և դէպքը վախճան գտան: Եթէ շուկայի յանկարծական կռիւր չըլլար, այնչափ կոտորած չէին կրնար ընել. այժմ այնպէս կը հաշուի թէ 2-2,500 մարդ մեռաւ: Հազարաւորներ այժմ խեղճ ու թշուառ վիճակի մը են թաւրկուած են թէ անթուութեան և թէ ցուրտի ու վախի պատճառով:

ԱՆԻՈՒԱ.

ՄՇՈՅ ՎԻՃԱԿԸ.

Մուշ, 27 նոյեմբեր 1895.

Վերջին թղթակցութեամբս բաւական խօսած եմ մեր քաղաքի և դաշտի աննախանձելի վիճակին վրայ: Ամեն օր շրջակայ գաւառներէ մեղ հասած ողբալի լուրերը ցոյց կուտան թէ նոյն խեղ մեր այս հարստահարեալ և ահաբեկ վիճակին մէջ Հայաստանի միւս գաւառներու կոտորուած և կորսուած մեր ազգայնաց նայելով՝ մեք դարձեալ բարեբաղդ ենք եղեր որ գէթ առ այժմ կեանքերնիս ողջ է...

Այս անգամ կուգամ մեր շրջականերէ հասած աղեկտուր տեղեկութիւնները համառօտիւ ներկայել «Հնչակի» ընթերցողաց:

Աինձի գաւառին պատկանեալ ճապաղձուրի, Զըբտէի և Պէպարա մէջ 16 հայ գիւղ, որ 500 տուն կը պարունակէր, կոտորած և աւերած և մընացեալք բոնի ու պաշտօնապէս խլամ ըրած են:

Ճապաղձուրի սահմանակից Բալու քաղաքին մէջ հայերէն շատերը սպաննուած և մնացածներն ալ իրենց եօթը քահանաներով բոնի խլամ ըրած ու թլփուտած են և եկեղեցիները մզկիթի վերածած են: Բալուի Հաւաւ գիւղի 400 տուն բնակիչները սպաննուած և գիւղը վառուած է. նոյնպէս Խօշմաթ, Նալըշի, Սաքրատ, Սըղան, Նորգիւղ, Նիւզէլէ, Եարըմձի, Դով, Կըպէ, Թըքան, Նախան, Նըզարան, Սարուխան, Վարգենիս, Քօնաք-ալմաղ և ուրիշ բազմահայ գիւղեր կոտորուած, կողոպտուած և մնացեալ բնակիչները տաճկացուած են:

Այսպէս ալ Լըճէի մերձ Օփուլ, Սառնես և այլն բազմահայ գիւղեր կողոպտուած, բնակչաց շատեր սպանած և մնացեալներ բոնի խլամ ըրած են:

Մակաբայեցւոց վանքն իր մէջ ապաստանած երեք հարիւր հայերով խալաւ կոտորած, կողոպտած, վանահայր տ. Վահան քահանայն սպանած և վանքն աւերակ դարձուցած են:

Այս դժբաղդութեան հանգիստ է նաև Տիգրանակերտի կուսակալութեան մէջ Մարաին իր գիւղերով և Խարանի մէջ եղող հայերն ալ ջնջուած են:

Սիւվանի, Բարավանի, Պշերիկի, Զըռլէքանի ընդարձակ դաշտերը 105 գիւղերով խալաւ կողոպտուած, այրուած ու մարդիկ սպաննուած են:

Աինձի Խուլը, Խիան և Ծվետան գաւառակները իրենց 37 հայաբնակ գիւղերով խալաւ կողոպտուած, շատերն սպաննուած, մնացելոց ուստեսան յաւիշտակուելով խեղճերը թափառական ցուրտէն ու անթուութեան հետզհետէ կը մեռնին:

Վերոյիշեալ գաւառներուն մէջ տեղի ունեցած կոտորածներն և աւարառութիւնները յայտնապէս օսմանեան կանոնաւոր զօրքերն և ոստիկաններն են կատարած՝ միացած թուրք և քուրտ խուժանին հետ: Քիւրտերը արդէն կըսեն թէ «մեր սուլթանի հրամանաւ է որ այս բաները կընեմք. մինչև հիմա ինչո՞ւ այսպէս չէինք ըներ, և եթէ ճշգիւ կատարէինք այդ հրամանը, հիմա Մշոյ երկիրն ալ հայ չէր մնացեր»: Հետեւաբար խալաւ զրպարտութիւն է ըսել թէ հայերը նախայարձակ եղած են կամ ու է կերպով պատճառ տուած են այս ընդհանուր նախաձիւրներուն, որոնց ամբողջ պատասխանատուութիւնը կը ծանրանայ թուրք բարբարոս կառավարութեան և դահիճ մարդակեր սուլթան Ապտիւլ Համիտի վրայ:

ՀԲԱՏ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ.

1895 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ ԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ.

ՎԱՆ-ՏՈՍՊ.

Ծովարան. Հոկտ. 18. — Քանի օր է վեր գիւղի բարբարոս քրտերը շնորհիւ մի քանի մատնիչներու քանի մի անձանց կեանք վտանգի մէջ են դրած. քրտերը այդ անձերու ետեւէն ընկած կուղին կեանքէ զրկել. բայց ասոր անոր միջնորդութեամբ և աղաչանք յետ դարձած են, միով բանիւ ուսոնց կեանք անապահովութեան մէջ է: Ամբողջ գիւղին վտանգ կը սպառնայ. բնակիչք մտադիր են գաղթելու:

Տարման գեղ և Ոսկեպակ գիւղերը ենթարկուած են թալանի, որի քանակութիւնը անյայտ է: Ամոյս 1-ին ըս-

տացած տեղեկութեանց չայելով այդ երկու գիւղերը ենթարկուած են երկրորդ և վերջնական յափշտակութեան: (Վան քաղաքի վիճակի մասին քիչ յետոյ):

ՏՈՍՊ

Խոփշի գիւղ, Հոկտ. 23. — Բզնունեաց Գաւառի Առէն գիւղէն երեք հարիւր հոգիէն աւելի հարստահարեալ հայեր գաղթեցին եկեր են տեղս. հագուստ, անկողին, ուտեստ և ամեն մի ապրուստի պիտոյք չունին խաւառ: Բաց աստի, նոյն գիւղացի 25 — ամեայ ծաղկահասակ երիտասարդ մը վերաւորուած է ոտքէն, ծունկէն վար. հրացանի գնտակը այժմ ոտքի մէջն է և նաև ոտքի ոսկորը կոտրած է:

Խոփշի գիւղ, Հոկտ. 24. — Վերոյիշեալ երեք հարիւր գաղթականներու թւոյն մէջ կան չորս հոգի հրացանի գնդակով և սրով վերաւորեալներ. վերաբոյժի պէտք ունին. տեղս վերաբոյժ չգտնուելուն առթիւ սոյն չորս հոգիները օր-գիշեր անդադար արեան արտասուք կը հոսեցնեն: — Ի շնորհս Վանի և Լիմ Լնապատի նախորդ վանահայր առաջնորդին (խօսքը շէյխ Պողոսի մասին է) այսօր գիւղին մէջ մի հատ ատրճանակ կամ հրացան մինչև իսկ չի գտնուիր, և շրջակայ եղած զրացի թիւրք և քիւրդ ազգեր (ցեղեր) մտադիր են գիւղիս վրայ յարձակում ընել:

Լըբերնի գիւղ, Հոկտ. 26. — Գաղթականները չափազանց կը նեղուին սառնամանիքէն և ուտեստների ու բռնակարանների պակասութեան պատճառով մաս մը պէտք է խրկել շրջակայ գիւղօրայք. սակայն գժուարութիւնն այն է, որ չի պիտի կրնան մինչև իրենց տեղեր հասնիլ, քանզի շէն մնացած գիւղեր իրարմէ հեռու և ժողովուրդն ալ բոլորովին մերկ ու բոլակ է, իսկ եղանակները ցուրտ են: Առէն գիւղին մէջ, ի բաց առեալ քիւրտերու գնդակներէն սպանեալները, ութ հոգի ալ ցրտերէն մեռած, են կին, աղջիկ, տղայ. մնացեալն ալ հոգեւորքի մէջ կը տառապին:

Լտեռ ու Կորչէն գիւղերի ոչխարները կը տարուին: Կորչէն գիւղի քահանայի և գիւղացւոց վեց հատ գոմէշ բռնի կերպով կը տարուին Մուսաթանցի քինտիի ձեռամբ:

Արտաէզ կը պաշարուի. գնդակահոծութեան ենթարկուած է:

Ամուկ գիւղ, Հոկտ. 17. — Ազգային վիճակ յայտնի է, որ ներկայս աղետալի է և վերջին աստիճան կասկածանաց ենթակայ, որոնցմէ մէք ալ Ամուկ գիւղացիքս, սաստիկ նեղութեան մէջ կը գտնուիմք, վասնզի բացարձակ ըստականակներ կուտան. մեղի կըսեն՝ «Եթէ քաղաք շարժում եղաւ մենք ալ անպատճառ պիտի յարձակուամք ընելը մեր ուղածին պէս»: — Քիւրտերու խորհուրդն է այս: Յայտնի է, որ հայեր դատարկաձեռն լինելով չեն կրնար գիմարել. անմենքն ալ ոտնակոխ պիտի ըլլան:

Ատուց կղզի, Հոկտ. 24. — Արծկէ գաւառու քանի մը գիւղերէ չորս-հինգ հարիւր մարդիկ, արք, կանայք, ծերք և տղայք սոյն ութ օրէ ի վեր կղզոյս մէջ լեցուած են քրտերու հարստահարութիւնէն փախչելով և ապաստանելով աստ: Բայց ոչ պաշար ունին, ոչ ուտեստ և ոչ հանգել ձեռքէն:

ԱՐՃԷՇ (ԲԱՋԲԵՐՈՒՆԻՔ)

Ահանց, Հոկտ. 13. — Այս հինգ օրէ ի վեր է, որ տեղւոյս հայ ժողովուրդեան մէջ կասկած կայ. այն է որ թէ թուրքերէն և թէ քուրտերէն ոմանք իրենց հայ բարեկամներն խաւած են թէ թուրքեր և քուրտեր մը տադիր են ձեզ վնասել և նոյն իսկ կատարեալ պատ-

րաստականութեան մէջ են, որ հրապարակաւ կը տեսնուի և իրենց որոշած օրն մինչ կերակի օրն է. և այս բանին համար Հիւսէյն ու Էմին փաշաներ իրարու հետ պիտի հաշտուին:

Ահանց, Հոկտ. 17. — Ահա ցերեկ-գիշեր Տիւան գիւղէն ութ հարիւր ոչխար տարած են, որոնց հետ Գանիէլի չափահաս դուստրն ալ տարած են. թօսուն է Ֆէնտին է տարեր: — Այսօր գիշեր Ծակծակիի, Ճիւտկեհհո գիւղերու ոչխարները քրտեր բոլորովին տարեր են: (Կը շարունակուի)

ՅԵՌԱԳԻՐ ՌԵՏՅԵՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

Կ. Պօլիս 14 փետրվար.

Հնչակեան Կուսակցութեան վեց պարագլուխ անդամներ, որ գտնուում էին Օւէյթունցիների մէջ, արտաքսվեցան օսմանեան հողից և 30 ժանդարմների հսկողութեան տակ և մի հիւպատոսական թարգմանի ընկերակցութեամբ արդէն ճանապարհ են ընկել դէպի Մերսին, որտեղ պէտք է նաև առնեն Լաբօպայի համար:

Կ. Պօլսի ամերիկական դեսպանի ջանքով սըրանից երկու ամիս առաջ բանալից արձակվեց և օսմանեան հողից արտաքսվեցաւ Հնչակեան Կուսակցութեան գործիչներից Մեքսիկացի Կէնէն, որ ձերբակալված էր Ալիլիկայում գրամ ու դէսքեր փոխադրած միջոցին: Այդ դէպքը, որ տեղի ունեցաւ Անտիքի մօտերը և իր ժամանակին մեծ աղմուկ յարուցեց և յիշատակից եւրոպական թերթերում, իր մանրամասն նկարագրութեամբ կը գետնադնէր «Հնչակի» լրագրող համարում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Օսմանական տեղերից մեզ հաղորդվում է, որ այլ և այլ բաղադրանքի անձեր և տարբեր-տարբեր խմբեր ի չարն են գործ գնում Հնչակեան Կուսակցութեան անունը և ամեն տեսակ սպառնալիքներով ու դատապարտելի եղանակներով գրամներ հաւաքում հայ հասարակութեան մէջ: Սըրանով յայտարարում ենք, որ յօդուա Կուսակցութեան և կամ Օւէյթունցի զրամական նպաստները, անհատական և կամ հանգանակաթերթով հաւաքված, այսուհետեւ պէտք է ուղարկվեն միմիայն Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնին, ուղղակի կերպով, թերթիս հասցեով կամ Հնչակեան Մասնաձիւղերի միջոցով:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և զրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].